

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գ. Կ. ԲԱԼԱՅԱՆ

*Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական
լեզվաբանական համալսարանի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Կրթության իրավունքը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների բաղադրարար մասն է, որը սահմանադրական իրավունքի ուսումնասիրման առանձին ուղղություն է, հանդես է գալիս որպես երկրորդ սերնդի իրավունք և իր մեջ ներառում է գիտելիքներ կրթության իրավունքի աղբյուրների, կրթության ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման, կրթության ոլորտի կառավարման, կրթության ոլորտի տնտեսական և ֆինանսական գործունեության հիմքերի ապահովման, կրթության իրավունքի պատմության և միջազգային փորձի վերաբերյալ:

Կրթության իրավունքն իրապես կենսագործելու համար այն պետք է լինի **հասանելի, մատչելի, ընդունելի և փոփոխելի**:

Ամբողջ աշխարհում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում կրթության դերը էականորեն բարձրացել է: Հանրաճանաչ փաստ է այն հանգամանքը, որ գրեթե բոլոր զարգացած երկրներում, ինչպես զարգացման նախնական փուլում, այնպես էլ ներկայումս լրջագույն ուշադրություն է դարձվում կրթության ոլորտին: Կրթության ոլորտը և պատրաստված մասնագետների որակը հանդիսանում են այդ երկրների առաջխաղացման գլխավոր և կարևորագույն գործոններից մեկը: Ներկայումս կրթությունը դիտվում է որպես ապագային միտված ամենաարժեքավոր ներդրում: Կրթության իրավունքի կառուցվածքը կազմված է մի շարք միայն իրեն բնորոշ առանձնահատկություններից:

Նախ, պետք է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում «կրթության իրավունքը»: Դա կրթական ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության համադրությունն է: Այդ հարաբերությունները առաջանում են ինչպես պետության և անձի միջև, այնպես էլ սովորողի և ուսումնական հաստատության (դաստիարակ, դասատու, դասախոս և այլն) միջև: Կրթությունը շարունակական գործընթաց է, որը միտված է որոշակի գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, որոնց համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին որոշվում է վերջնական քննության միջոցով և հավաստվում է տվյալ կրթության մակարդակի համար համապատասխան փաստաթղթի շնորհմամբ: Կրթության իրավունքի անբաժանելի մաս պետք է համարել նաև այն հարաբերությունները, որոնք առաջանում են կրթության և այլ ոլորտի իրավունքների հատման դեպքում: Այդպիսի ոլորտներից են քաղաքացիական, աշխատանքային, ֆինանսական, վարչական և այլ իրավունքները:

Կրթության իրավունքի աղբյուրները բաղկացած են ոչ միայն ներպետական օրենսդրությունից, այլև միջազգային օրենսդրությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացել է

Բոլոնիայի գործընթացին՝ կրթության իրավունքի իրացման հարցում միջազգային օրենսդրության նշանակությունը բարձրացել է:

Ի տարբերություն եվրոպական և ռուսաստանյան մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ «Կրթության իրավունք» առարկան ներկայումս ընդգրկված չէ Հայաստանի բուհերի առարկայացանկում՝ որպես հատուկ դասընթաց: Միջազգային փորձի հիման վրա «Կրթության իրավունք» առարկան կարելի է ներառել իրավաբանական և մանկավարժական բուհերում իրավաբանի մասնագիտությամբ բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտական ծրագրերով սովորողների առարկայացանկում:

«Կրթության իրավունք» դասընթացի աղբյուրները պետք է հիմնված լինեն տվյալ ոլորտում նորագույն տեսական և գործնական հետազոտությունների, նորմատիվ փաստաթղթերի, կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումների և միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

«Կրթության իրավունքի» առանցքային թեմաներից են Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին, այդ մասնակցությամբ պայմանավորված կրթության համակարգի բարեփոխումները:

Տվյալ դասընթացի ուսուցման մեթոդը ենթադրում է խնդրով ուղղորդված քննարկումներ: Ուսուցումը պետք է ներառի տարբեր ձևեր՝ դասախոսություններ, սեմինար պարապմունքներ, տեղի ունեցած և հնարավոր դատական և վարչական գործընթացների քննարկումներ ու ուսումնասիրություններ, մարդու իրավունքների պաշտպանի կողմից վեր հանված բացթողումներ և այլն:

Դասավանդման տվյալ մոտեցման յուրահատկությունը կայանում է դասընթացի հաջորդական մատուցման մեջ, որի բաղկացուցիչ մասերն են կազմում հետևյալ բաժինները. կրթության իրավունքի հասկացությունը, կրթության իրավունքի նշանակությունը, կրթության իրավունքի աղբյուրները, կրթության իրավունքի միջազգային ասպեկտները:

Դասընթացի խնդիրներն են՝ սովորողներին ծանոթացնել Հայաստանում ուսումնական գործընթացի կազմակերպման իրավական հիմքերին, կրթական իրավահարաբերությունների նորմատիվ-իրավական կարգավորման սկզբունքներին, կրթական չափորիշիչների հասկացությամբ և դրանց նշանակությամբ, կրթության ոլորտում իրավակիրառման առանձնահատկություններին, Հայաստանում տեղի ունեցող կրթական բարեփոխումների և սպասվող արդյունքների գանահատմանը, կրթության ոլորտին առնչվող միջազգային փորձին և հիմնարար փաստաթղթերին:

Դասընթացն ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է տիրապետի կրթության իրավունքի հիմնական հասկացություններին և տարակարգերին, գործնականում կարողանա ներկայացնել յուրաքանչյուր անձի կրթության սահմանադրական իրավունքի իրացման կառուցակարգերը և երաշխիքները, ներկայացնի կրթական ոլորտի կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության իրավական հիմքերը և առանձնահատկությունները, ընկալի, թե ինչ է կրթական չափորոշիչը և դրա նշանակությունը, կարողանա իր ստացած գիտելիքներն օգտագործել գործնական աշխատանքում, ունենա հմտություններ կրթության բանագավառի իրավական ակտերի հետ աշխատելու համար, միաժամանակ ունակ լինի խորհրդատվություն տրամադրել և այլն:

Վերը նշված գիտելիքների և ունակությունների ձեռք բերման նպատակով նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել կրթության իրավունքի ինստիտուտների և կրթության օրենսդրության համակարգման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, կրթական օրենսդրության հետագա զարգացման ուղղությամբ առաջարկությունների քննարկմանը, կրթական հաստատությունների ֆինանսավորման իրավական կարգավորմանը, հարկային բարենպաստ քաղաքականության մշակմանն ու իրականացման նպատակով ուսումնասիրությունների անցկացմանը, Բոլոնիայի գործընթացին միանալու համատեքստում կատարվող բարեփոխումների քննարկմանը և Բոլոնիայի սկզբունքների իրագործմանը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում, միջազգային իրավական փաստաթղթերի ազդեցությանը Հայաստանի օրենսդրության վրա: Առանձին քննարկման առարկա պետք է լինեն Հայաստանի բուհական համակարգի խնդիրները եվրոպական կրթական ընդհանուր տարածք ինտեգրվելու ճանապարհին: Ուսումնասիրության պետք է ենթարկվի այն հարցը, թե ինչպիսի ազդեցություն է ունենում գլոբալացման գործընթացը կրթական իրավահարաբերությունների վրա: Ստորև ներկայացնում ենք **«Կրթության իրավունք» առարկայի բովանդակությունը:** Այն պետք է ներառի՝

- կրթության իրավունքի հասկացությունը,
- կրթության իրավունքը՝ որպես օրենսդրության բնագավառ,
- կրթության իրավունքը՝ որպես մարդու իրավունքների մասին գիտության մաս,

• կրթության իրավունքի պատմությունը Հայաստանի Հանրապետությունում: Կրթության իրավունքի ուսումնասիրման առարկան է կազմում «Կրթությունը և կրթական հարաբերությունները», այսինքն՝ այն իրավահարաբերությունները, որոնք առաջանում են կրթության բնագավառում: Կրթության իրավունքի մեթոդներն են՝ թույլտվությունն ու սահմանափակող արգելքները կրթական իրավահարաբերություններում, ինչպես նաև խորախուսման, առաջարկության, համաձայնեցման, արգելման և այլ միջոցները: «Կրթության իրավունք» առարկայի սկզբունքներն են ընդհանուր օրենսդրական, ինչպես նաև կրթության ոլորտի օրենսդրության սկզբունքները: «Կրթության իրավունք» դասընթացի ուսումնասիրման առարկան ներառում է կրթական բարեփոխումները, կրթության իրավունքի ինստիտուտները և դրանց համակարգը: Հայաստանում կրթության համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում պետական կրթական չափորոշիչները: Չափորոշիչները ընդունվում են պետության կողմից՝ ըստ մասնագիտությունների, պայմանավորված նրանով, թե դրանք որ կրթական աստիճանի կամ մասնագիտացման համար են նախատեսված: Կրթական ծրագրերը ստեղծվում են այդ չափորոշիչներին համապատասխան՝ ելնելով ուսուցման ձևից և եղանակից: ՀՀ օրենսդրությունը կրթությունը պայմանականորեն բաժանում է մի քանի փուլերի, աստիճանների, ձևերի և մակարդակների: Կրթությունն իրականացվում է այնպիսի կրթական հաստատությունների միջոցով, ինչպիսին են նախադպրոցական հաստատությունները, դպրոցները, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական և գիտական հաստատությունները: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորությունը: Կրթություն ստանալու ձևերն են առկան, հեռական, երեկոյանը, հեռավարը և

այլն:

Կրթության իրավունքի աղբյուրները իրենցից ներկայացնում են օրենսդրական ակտերի մի համակարգ, որը սկսվում է յուրաքանչյուր անձի համար կրթության իրավունքի երաշխավորումից և իր մեջ ներառում է ինչպես 33 ներպետական օրենսդրությունը, այնպես էլ միջազգային-իրավական ակտերը: Միջազգային իրավական ակտերը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ ընդունող մարմինների.

1. ՄԱԿ-ի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական, և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և այլն,

2. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի կոնվենցիան, որակավորումների կրթական ծրագրերի և բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման տարածաշրջանային կոնվենցիաները, տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիան և այլն,

3. Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին ընդունված կոնվենցիան, Եվրոպական սոցիալական խարտիան և այլն,

4. այլ միջազգային կազմակերպությունների, ԱՊՀ երկրների, Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների կողմից ընդունված փաստաթղթեր:

Վերը թվարկված միջազգային օրենսդրության օրինակների մեջ իրենց ուրույն տեղն ունեն Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ընդունված միջազգային փաստաթղթերը (Սորբոնյան հռչակագիրը, Բոլոնիայի հռչակագիրը, Փարիզյան կոմյունիկեն և այլն), որոնք միտված են ստեղծելու Բարձրագույն կրթության եվրոպական տարածք:

«Կրթության իրավունք» առարկայի մաս է կազմում **կրթական իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակի որոշումը և նրանց դասակարգումը**: Կրթության իրավունքն ունի իր սուբյեկտների շրջանակը, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են կրթական հարաբերությունները կարգավորող օրենսդրության միջոցով: Կրթության իրավունքի օբյեկտ են հանդիսանում կրթական իրավահարաբերությունները, գիտելիքները և հմտությունները, սովորողների և ուսումնական հաստատությունների աշխատակիցների առողջության պահպանումը, նրանց սոցիալական պաշտպանվածությունը, վերոնշյալ սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները: Կրթության իրավահարաբերությունների սուբյեկտ են հանդիսանում ուսումնական հաստատություններում սովորողները, սովորողների ծնողները, օրինական ներկայացուցիչները, ուսումնական հաստատությունները, դրանց աշխատակիցները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կրթության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները: Օրենսդրությամբ սահմանված են կրթական հաստատությունների իրավակազմակերպական ձևերը, դրանց սետղծման կարգը: Կրթական իրավահարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ, որի բաղկացուցիչ մասն են կազմում ուսումնական հաստատությունների կանոնադրությունները: Ուսումնական հաստատություններն իրականացնում են իրենց գործունեությունը:

նը բացառապես լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջները չբավարարելու դեպքում: Ուսումնական հաստատությունների կազմավորման և լուծարման կարգը սահմանվում է օրենքով: Ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ հսկողություն են իրականացնում պետության կողմից լիազորված մարմինները: Կրթության ոլորտում կառավարության քաղաքականությունը ընդհանուր առումով մշակում և իրականացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը: Կրթության բնագավառում որոշակի լիազորություններով օժտված են նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կազմում գործում են կրթության բնագավառի կառավարման և հսկողության համապատասխան ստորաբաժանումներ: Վերոնշյալ մարմինները իրականացնում են պետության քաղաքականությունը կրթության ոլորտում: Կրթության ոլորտի նկատմամբ հսկողություն իրականացնելու հիմնական ձևերն են՝ կրթության որակի նկատմամբ պետական հսկողությունը, պետական այլ մարմինների հսկողական և վերահսկողական գործունեությունը ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, կրթական հաստատությունների լիցենզավորումը և պետական հավատարմագրումը: Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է կոլեգիալ և միանձնյա ղեկավարման համադրության հիման վրա՝ հաշվի առնելով ինքնավարության սկզբունքները: Բուհերում ղեկավարման սկզբունքներից է նաև ակադեմիական ազատությունը: Ուսումնական հաստատության կոլեկտիվ կառավարման մարմիններն են կառավարման խորհուրդը, գիտական խորհուրդը, հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական խորհուրդը և այլն: Միանձնյա ղեկավար մարմինները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ. դրանք են՝ տնօրենը, ռեկտորը, քարտուղարը, նախագահը: Կոլեգիալ կառավարման մարմնի և միանձնյա ղեկավարի միջև լիազորությունների բաշխումը տեղի է ունենում ՀՀ օրենքների և ուսումնական հաստատության կանոնադրության հիման վրա: Զինվորական ուսումնական հաստատությունների կառավարման սկզբունքները կարող են տարբերվել ընդհանուր ուսումնական հաստատությունների համար նախատեսված սկզբունքներից:

Կրթական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեության և սեփականության ձևավորման սկզբունքները սահմանված են օրենքով: Ուսումնական հաստատության գույքը գոյանում է հիմնադրի կողմից տրված, ինչպես նաև ուսումնական հաստատության կողմից իր միջոցների հաշվին ձեռք բերված գույքից: Հիմնադիրը կարող է ուսումնական հաստատությանը տրամադրել գույք ինչպես անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով, այնպես էլ՝ որպես սեփականություն: Կրթական հաստատությունների եկամուտների մեծ մասը ապահովվում է վճարովի կրթական ծառայություններ մատուցելու հաշվին: Հիմնադրի որոշմամբ կարող են սահմանվել նաև ձեռնարկատիրական գործունեության այլ ձևեր: Օրենսդրությամբ նախատեսվում է նվիրատվությունների և դրամաշնորհային ծրագրերից ստացված եկամուտների հնարավորությունը: Ուսումնական հաստատությունը ազատ է օգտագործելու իր տնտեսական գործունեությունից ստացված շահույթը՝ կանոնադրական նպատակների իրագործման համար: Ուսումնական հաստատությունը պատասխանատու է իր ստանձնած պար-

տավորությունների համար: Կրթության ոլորտում պետությունը իրականացնում է հատուկ հարկային քաղաքականություն: Ուսումնական հաստատություններում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են գործող աշխատանքային օրենսդրությամբ:

«Կրթության իրավունք» առարկա ուսումնասիրող սովորողները որպես հետազոտական աշխատանք կարող են ներկայացնել կրթության համակարգում ֆինանսական ներդրումների իրավական կարգավորման վերաբերյալ աշխատանքներ:

«Կրթության իրավունք» առարկայի մաս է կազմում արտասահմանյան երկրների կրթության իրավունքի հիմունքների, ինչպես նաև այդ երկրների կրթության վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը: Նպատակ ունենալով ՀՀ կրթական համակարգը դարձնել առավել մրցունակ և որակյալ, անհրաժեշտ է նախ ուսումնասիրել կրթական զարգացած համակարգ ունեցող երկրների կրթական իրավահարաբերությունները: Այդ երկրների շարքին կարելի է դասել Ամերիկայի Միացյալ Նահանգները, Արևմտյան Եվրոպայի երկրները: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի Ֆրանսիայի փորձը, որն առայժմ եվրոպական միակ երկիրն է, որտեղ կրթական իրավահարաբերությունները կանոնակարգվում են Կրթական օրենսգրքով, ինչպես նաև կարելի է ուսումնասիրել Ճապոնիայի, Չինաստանի և այլ երկրների փորձը: Կրթական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը կախված է տվյալ պետության կառավարման համակարգից, կառուցվածքից (ունիտար կամ դաշնային) և այլ հանգամանքներից: Այս առումով ուշադրության պետք է արժանանան երկրի տարածքային բաժանման առնաձևափոխությունները: Մի շարք երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն) կրթության ոլորտի քաղաքականությունը կարգավորվում է վարչատարածքային կառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանման կողմից, բայց անգամ այս դեպքում պետական մարմինների կողմից հաստատվում են համապետական նշանակություն ունեցող կրթական ծրագրերը և դրանց հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգերը: Ուշագրավ է նաև ԱՊՀ երկրների կրթության իրավունքի ուսումնասիրությունը, քանի որ յոթ տասնամյակ շարունակ կրթական օրենսդրությունը այս բոլոր երկրներում եղել է միատեսակ, իսկ կրթական համակարգերում տարբերություններ գրեթե չեն եղել: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը նրանց հետ միասին անցել է որոշակի ճանապարհ և ունի զարգացման ընդհանրություններ:

МЕТОДЫ И ЗАДАЧИ ИЗУЧЕНИЯ ПРАВА НА ОБРАЗОВАНИЕ

Г. К. БАЛАЯН

Статья посвящена методам и задачам изучения права на образование. Автор предлагает изучать в высших учебных заведениях Республики Армения право на образование, в частности, рассматривать государственные образовательные стандарты, систему учебных заведений РА, нормативно-правовые и организационные основы учебного процесса, а также основные пути международного сотрудничества с вуз-ами европейских стран, согласно принципам Болонской декларации.

В статье рассматриваются методы, цели, задачи и этапы процесса изучения права на образование.

THE PROBLEMS AND METHODS OF STUDYING THE RIGHT FOR EDUCATION

G. K. BALAYAN

The article is about the problems and methods of studying the right for education. The author suggests that the education right should become an object of close study in the Republic of Armenia, like in a number of European states. State educational program criteria, sectors of educational system, the normative and legal, and organizational documents on educational process are considered to be most important. In the framework of the Bologna process, it is necessary to be in an active cooperation with European leading universities, with the purpose of integration into European Higher Education Area.

ЛЕГИТИМНОСТЬ И ЛЕГАЛЬНОСТЬ КАК ВНУТРЕННИЕ ОБЪЕКТИВНЫЕ СВОЙСТВА ПРАВА

С. А. ХАЧАТРЯН

*Кандидат юридических наук,
профессор ГГУ*

В немецком и русском праве и правовой науке латинские термины *Lex*, *Leges*, *Legal*, *Legales*, *legalität* означают соответственно «закон», «законы», «законный». Но одновременно эти термины могут обозначать и само право, когда речь идет о средневековых (варварских) кодексах («*Leges barbarorum*»), или о древнем неписаном праве, так называемом «*Leges non scriptae*». Иногда термины *Legal*, *legalität* использовались и в смысле открытости, публичности. Легальность, как признак и закона, и права, присутствует и в правоприменении так называемого «*contra legem*»¹. Термины *legitim*, *Legitimität*, *legitismus* могут обозначать такие понятия, как «законный», «законность», а иногда — «подлинность» и «признанность».

В СССР эти термины не употреблялись. В советской правовой литературе, а также в «Советском энциклопедическом словаре», «Словаре иностранных слов», в «Юридическом энциклопедическом словаре» объяснение этих терминов отсутствует². Государственные нормативные акты и акты, принятые органами КПСС, считались заведомо легальными и леги-

¹ См. **А. В. Федотов**. Возможно ли применение *contra legem* в демократическом правовом государстве? «Журнал российского права», N 8, 2002, с. 92-99.

² См. Советский энциклопедический словарь. М., 1987, с. 695; Словарь иностранных слов. М., 1989, с. 281; Юридический энциклопедический словарь: второе, дополненное издание. М., 1987.